



Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ (ՀԵԵՀ-EFSE)

Իրականացման 17.12.2009 - 31.12.2031
Ժամանակահատված:

Այլ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 5 100 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

KfW

Նախագծի կայքէջ: <https://www.efse.lu/>

Նախագծի նկարագրություն:

Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամը նպատակ ունի խթանել տնտեսական զարգացումն ու բարգավաճումը՝ տեղական որակավորված ֆինանսական հաստատությունների միջոցով զարգացման լրացուցիչ ֆինանսներ ապահովելով հատկապես միկրո և փոքր ձեռնարկությունների (ՄՓՁ), ինչպես նաև մասնավոր տնային տնտեսությունների համար:



Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:
<https://www.facebook.com/EFSEfund/>, <https://www.efse.lu/>,
<https://twitter.com/efsefund>

Ակնկալվող արդյունքներ:

Արևելյան գործընկեր վեց երկրներում ՀԵԵՀ ի չմարված պորտֆելը 2017 թվականի երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 271.0 մլն եվրո, որը բաշխել է հետևյալ կերպ.

- Վրաստան՝ 54% (145.1 մլն եվրո)
- Հայաստան՝ 22% (58.4 մլն եվրո)
- Ուկրաինա՝ 11% (30.8 մլն եվրո)
- Բելառուս՝ 7% (20.0 մլն եվրո)
- Ադրբեջան՝ 4% (9.8 մլն եվրո)
- Մոլդովա՝ 2% (6.9 մլն եվրո)

ՀԵԵՀ վարկերի մեծ մասը տրամադրվել է առևտրային բանկերին, իսկ մնացած մասը՝ միկրոֆինանսական բանկերին և միկրովարկային կազմակերպություններին: 2017 թվականի հունիսի դրությամբ ՀԵԵՀ-ն, ընդհանուր առմամբ, 1,727.6 մլն եվրո էր հատկացրել արևելյան գործընկեր երկրների 168,330 վերջնական վարկառուներին: